

87

Հոկտեմբերի 1-ից մինչև
Առաջինի 1-ը արդէ 1 ր. 50 կ.
առար բազարների համար 2 ր:

ՀԱՄԱՐԸ 10 ԿՈԹ.

Ցարարարաթիւնները ըն-
դունում են ամեն լիզով
առ 15 կոպ. առար բազար-
ներից 20 կոպ.

ԶԱՆԳ

Литературный, общественно-экономический и
художественный еженед.

журналъ

„ЗАНГЪ“

Адресъ—Баку редакция жур-
нала „ЗАНГЪ“

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ, ՏԵՍՔԱՐԱՏԱԿԱՆ ՀԱՐԿԱՑՔԵՐԸ

1—2 Ա. ՏԱՐԻ

Կիրակի 12 Հոկտ. 1918 Վոսկրесенье, 12 Октябрь

1 годъ № 1—2

ՏՈՅՆՈՅ ՎԵՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՎԵԼԵՐԸ



+ Տ. Արշակյան



+ Միքայ Ա. Կարողիկոս



+ Գ. Արծրումի



+ Մերեց



+ Ա. Վարդապետին



+ Գ. Զանցիս



+ Բագրի



+ Ա. Գալիսինան



+ Գ. Միջոյան

+ Մ Ա Ի Բ Ա Ժ Ա Ն

Անողոք մահը խիեց մեր աղքատիկ զբողներից էին մի զոհ։ Մեռաւ տաղանդաւոր զբող ֆրիգոր Տէր-Յովիաննիսեանը, որ կրում էր «Մուրացան» կեղծ անունը։

Մուրացանը ծնւել է 1854 թ. դեկտեմբերին։ Աւարտել է Շուշայ թեմ. դպրոցը, որտեղ գեղեցիկ կերպով ուսել է մայրենի լեզուն, որ ապագայում առանձնապէս աչքի էր ընկնում նրա երկերի մէջ։ Հանգուցեալը պարապւում էր հէնց Շուշում ուսուցչութեամբ, մինոյն ժամանակ զրում հայոց թերթերում։ Շուշուց նա թողնում է իր պաշտոնը տեղափոխւելով Թիֆլիս, մտնում է ծառայութեան իրրի հաշւապահ, բայց չնորհիւ դէպի զրականութիւնը ունեցած սէրին նա իր ազատ ժամանակը նւիրում է նրան։



Մուրացանը անորինակ ջանքերով սկսեց աշխատել հայրենի զրականութեան անդաստանում և արտադրեց մի շարք երկեր, որ նորագոյն հայ զրականութեան պատիւ թերել կարող են։ Նա երկար ժամանակ աշխատում էր ուսուցիչ Դարօ թերթում, ապա և Արձագանքում իսկ վերջին սարիններում «Էլումած ամսագրում»։ Նրա սկզբնական լուրջ աշխատանքներից է «Թուղանը» որ մինչև 90—սկան թւականները հայ քեմի վրայ մեծ ընդունելութիւն դրաւ, իսկ վերջնական գրւածները Մուրացանի նշանակութիւնը բարձրացրին և դրա մէջ նա հանդէս է դալիս ազգային ուղղութեամբ առաջա-

կարգ գրողներից մէկը, իրրի ընտիր վիպասանն Ազգային ուղղութիւնը կարմիր թելի նման անցնում է նրա բոլոր երկասիրութիւնների մէջ։ Մուրացանը իր վեպերի մէջ աչքի է ընկնում, և իրրի լաւ հմուտ հոգեբան։ մի առաւելութիւն, որ մեր վիպասաններից քչերն ունին։

Մուրացանը զրու է պատմական և ժամանակակից վէպեր։ պատմական վեպերից են «Գէորգ Մարզպետունին» և «Անդրէաս երէց»։ ժամանակակից վէպերն են։ — «Իմ կաթողիկ հարսնացուն» և «Առաքեալը», «Էլուսաւորութեան կննտրոնը», «Խորհրդաւոր միանձնունին», «Յատուկ թղթակիցը», «Նոյեան ագուալը» ևայնու վերջինս թէպէտ մի նկարտդրութիւն է 80 երեսից բաղկացած, բայց այնքան չնորհալի գործ է, որ կարդացում է մեծ հաջոյքով։ Ունի շատ ուրիշ մանր երկասիրութիւններ և նոյն իսկ փորձել է ոտանաւորներ գրել։ Տեղի սղութեան պատճառով մենք երկար չենք կարող կանգ առնել նրա ընտիր երկասիրութիւնների վրայ, սակայն այսքանը կասենք, որ Մուրացանը՝ չնայելով իւր վերջին ազգային ուղղութեան, ընտիր լեզւին և ուրիշ ասուաւելութիւններին, այնուամենայնիւ նա մեռաւ չգնահատւած իր ժամանակակիցներից։

Հանգիստ ենք մաղթում վաստակաւոր հայ հեղինակին...»

Բազւի Հայոց կուլ. Միութիւնը հեղինակի յիշատակը յարգելու համար բացի մի զրագարն հիմնելուց՝ ձեռնարկել է «Գէորգ Մարզպետունի» վէպի հրատարակութեան։

Լ. Ա.

ԽՍՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆԻ ՄԱՀԱՐՁԱՆԸ.

Բ. Հ. Կ. Մ. Գեղարքւուտական Մամաճիւղը պատշաճաւոր իշխանութիւնից թոյլտութիւն է ստացել Երևան քաղաքի հասարակական հրապարակներից մէկում կանգնեցնելու հայ անդրանիկ գրող Խաչատուր Արովեանի մահարձանը, որի համար Միութիւնը հանգանակութիւն է բացել հասարակական լայն խաւերում։

Պէտք կայ, կոչ անելու հասարակութեան, իր լուման ձգելու իր մեծ ուսուցչի յիշատակը յարգելու համար...»